

Նշանալուշտների առաջ խաւարի շնորհիւ ստեղծուած լայնարձակ ասպարեզը:

ՃԵՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՎՐԱԳ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ

ՊՐՕՖ. ՄԱՅԻ

Ցնորիս Փուրցելիի թև 2796 և 2797-ում տոլուած է ուսուցչապետ Մառի հետաքրքիր նամակը Պետերբուրգ գնացած Դիմիտրի Եպիսկոպոսի՝ Մինդելիայի առաջնորդի տուած պատասխանեալու առթիւ ։ Ն. Դուքնովոյին Վ. Երջինս տպել էր մի նամակ «Վրաց Եկեղեցու դէմ յարուցած հալածանքի ուժեղացու մը» վերնադրով, որով և մեջի այլոց մեղադրում էր և Դիմիտրի Եպիսկոպոսին։ Ահա այդ մեղադրանքից պաշտպանուելու համար Մինդելիայի առաջնորդը գրեց իւր պատասխանը, որով արդարանալ չըկաւ բողանալուց զատ, առիթ տուաւ ընդհանուր դժգո՛ութեան և այդ նամակին էլ կէտ առ կէտ պատասխանում է յարդելի ուսուցչապետը։

«Այս բոպէիս «Բազեներ» թէրթում կարդացի ն. Դուքնովոյի «Վրաց Եկեղեցու դէմ մզած հալածանի սասկացումը» յօդուածի դէմ տպուած պատասխանը։ Նա գրուած է Գուրիա-Մինդելիայի առաջնորդ Դիմիտրի Եպիսկոպոսի կողմից։ Ես հաւատացած եմ, որ սրբազնի Եթկիմի քառերն ու ֆրազները միայն ինձ չեն զայրացրել ու զարմացրել։ Ուուս հասարակութիւնը, որը տարածադրաբար շատ քիչ է ճանաչում կոմիտեան գործերը, իրաւունք ուներ սպասելու, որ սրբազնի բացատրութիւնն ու պատասխանը աւելի խաղաղ ոճով գրուած կլինէր... բայց Դիմիտրի Եպիսկոպոսի նամակն աւելի ցաւալի և զայրոյթ առաջ բերող տպաւութութիւնն է թողնում իւր բովանդակութեամբ և գրութեան հանդամանքներով։ Քըստոնէական հնագոյն Եկեղեցիներից մինը հասցրած է բարոյական կատարեալ քայլայման։ Նա անօդնական ընկած է ճանապարհին, տեղական անտէրութեան շնորհիւ ծածկուած է վէրքերով և քայլայւում է վիրաւոր, կողոպատուած և պատառուած։ Հարազատ որդիք խորթացել են, այնպէս են մեծացել, որ նրա մասին սցինչ չեն լսել և պատրաստ են ոտնակոխ անել, կրակ տալ և ոչնչացնել նրա այն հօմիւներին, որոնք ատելի են գարձել իրենց համար։ Միայն թոյլ հառաջն է, որ գեռ վկայում է նրա մարող կենդանութեան մասին։ Վրաց Եկեղեցուն այն արին, ինչ որ չէին արել քրիստոնէութեան ամենադաժան թշնամիք՝ Հաղկերտը, Կանդթամուրը և Շահա-

բասը: Սրանք բազմացրին հզօք նահատակների թիւը, նահատակնեցին մարմինը, բայց հոգին սպանել չըկարողացան:

Ոչ ոք չե յեշում նրան, ոչ ոք չե հոգում նրա իսկական ցաւերի մասին: Մարդկացին սովորական զգացմունքի ագեցուաթեամբ ն. Դուքնովոն յիշեցրեց մեզ մոռացուած զոհը և հաղորդեց մեզ՝ մի ժամանակ հոչակաւոր և անկախ եկեղեցու խորին հառաջը, որն այժմո պատուացուրի է և ընկած: Բայց Դուքնովոյի մարդասիրական կոչը հանդիպեց բորբոքուած հակառակորդի, սոսկալի անկրման յափշտակուած կողմնակցի և դա վրաց եկեղեցու գլխաւոր հովիւներից մէկն է: Այդ հոգեսր հովիւը ն. Դուքնովոյին մեղագրում է, որ նա ճիշտ չե հաշուել եկեղեցու վերքերը, որոնք ոչ թէ հարիւրաւոր, այլ հազիւ տասնեակներ են, որ մարմնի վրայ դեռ ևս առողջ տեղեք կան:

Հոգեսր հայրը Դուքնովոյին մեղագրում է, որ նա ուզիդ չե չափել վէրքերի խորութիւնը. ճիշտ է վէրքերը խորն են, բայց դեռ միւս կողմը չեն անցել, չեն ջարգել սոկորները:

Երբ խօսում են Վրաց եկեղեցու կացութեան մասին, դրանով ոչ թէ շօշափում են այս կամ այն հովուի Դիմիտրի եպիսկոպոսի կամ եքզարիների յատկութիւնները, այլ ի նկատի ունին կառավարութեան ամբողջ ձեն ունրա հետեանքը: Ուշադրութեան արժանին այն է, որ Վրաց եկեղեցու որտացաւ բարեկամներն անդամ ոչ մի լաւ բան անել չէին կարողանում, որովհետեւ չըգիտէին և չէին էլ կարող, իրենց պատրաստութեամբ հնարաւորութիւն չունէին իմանալու, թէ իրենք որտեղ էին և ի՞նչ ունէին անելու, եկեղեցու տեղական կարիքների և նրա հոգեկան ու կենսական պահանջների համեմատ: Խնքը Դիմիտրի եպիսկոպոսը այդպիսի անդիտութեան գեղեցիկ օրինակ է տալիս: Երբ եկեղեանի ապացոյց առաջ կըքերենք մի երկու կտոր նրա պատասխան նամակից:—

1—Սրբազն Դիմիտրին հպարտութեամբ առում է:— «Ինձ հաւատացած Մինդրելիայի թեմի բոլոր գիւղական եկեղեցիներում պատարագը մատուցում էր վրացերէն: Այդ բանում ես ոչ մի աշխատանք չեմ տեսնաւ» ոչ Դիմիտրի եպիսկոպոսի և ոչ էլ Վրաստանի նախկին և ներկայ եկզարիների կողմից, ովորհետեւ Մինդրելիայում VII գարուց անընդհատ գոյութիւն ունի վրացերէն առտուածապաշտութիւնը: Մինդրելիայում դիւրին բան չէթ Վրաց եկեղեցու հազարամեայ պատմութեան վերջ տալու գործը:

2) «Ես ինքս և իմ ընարած Տարաս Խւանիցի աւագ քառանան պատարագում և քարոզում ենք վրացերէն: Դիմիտրի Սրբազնը կ'երկի չե իմանում, որ Վրաց եկեղեցու զլու և էին

հանգնած գիտնական և Վրաց լեզուով կրթուած աստուածաբաններ, հռչակաւոր հեղինակներ, որոնք հարստացրին Վրաց եկեղեցական գրականութեան շտեմարանը: Վրաց եկեղեցին դեռ և լաւ յիշում է Արօէն, Եփրեմ, Գէորգի, Անտօնի և այլ բազմաթիւ լուսաւորուած հայրերին և վարդապետներին, և ընականաբար չի կարող սառնասիրու Դայել Նոյն Նշանակովի քահանաներին, որոնք անզօր են ծաղկեցնելու, տարածելու իրենց հայրենի եկեղեցական գրականութիւնը և ոչինչ չդիտեն իրենց եկեղեցու պատմական անցեալի մասին: Վրաստանի կաթողիկոսների և Եպիսկոպոսների ոսկորները կըցնցուին գերեզմանի մէջ, եթէ իմանան, որ Նրանց յետնորդներն իրենց արժանաւոր են համարում այն պատճառով, որ կարող են պատահմամբ պատրագ մատուցանել և վրացերէն լեզուով: Այն եկեղեցու զաւակներին առանձնակի սիրելու որպէս ապացոյց, որը նրանց բարձրացրել է, բերում են այն հանգամանքը, որ բոլոր էքզարխները վրացերէնը «Ճան» լեզու չեն կոչել և նրանցից մի քանիոք նոյն իսկ առանձին ուշադրութեամբ են վերաբերուել առաջնորդական երգեցիկ խմբերին:... Սրբազնը այսուեղ հակասութիւն չի նկատում, ընդհակառակն Վրաց եկեղեցու համար պարձանք է համարում, որ երբ այդ եկեղեցու բարձրագոյն հովիւները հաստատուած էին իրենց պատուաւոր պաշտօններում, երբեմն ուշադրութեամբ էին վերաբերուած Վրաց լեզուին: Վրաց լեզուն և եկեղեցու կացութեան գիտութիւնը պարտաւոր չեն համարում Վրաստանի Եպիսկոպոսների և մասնաւորապէս ամբողջ Վրաստանի հոգևոր պետի համար: «Ճշմարտութիւնից զուրկ է, որ երբ թէ ես՝ Փոթիկ Եպիսկոպոս՝ այնպիսի ուժեղ հալածանք էի մղում վրաց լեզուի գէմ, որ Մինգրելիայի, Սվանէթիայի և Սամուրզականի եկեղեցիներում ոլաւօներէն ժամակարգութիւն մտցը և այդ լեզուով էլ գրքեր ուղարկեցին և երկու թեմ եմ կառավարում, որովհետեւ ուղղում եմ ժողովրդին ռուսացները: ասում է Կիմիարի Եպիսկոպոսը:

Բանն այն չէ, որ դեռ աննպատակ բան է և վազ է Վրաստանի գիտական եկեղեցիներում ոլաւօներէն ժամարգրքեր մտցնելը, այլ այն, որ ոչինչ չի շնուռում՝ ոչ թէ միայն Մինցրելիայի, այլ և ամբողջ Վրաստանի եկեղեցական գործերի բարեկարգութեան համար: Վրացիք, երբ միանում էին հաւատակից ռուսների հետ, հաստատապէս հաւատացած էին, որ հնարաւորութիւն էին ստանում ազատ հոգեկան յառաջազիմութեան և մասնաւորապէս եկեղեցին բարեկարգելու համար այն անկախ հիմունքներով, որպիսիք Վրաստանի վոքքաթիւ ժողովուրգը կարողացաւ պաշտպանել կուլտուրական կոռուով այլափառ

քրիստոնեաներից և զէնքը ձեռին պաշտպանեց մահմէդականներից (պարսկէներից, արաբներից, թուրքերից, մոնղոլներից և լեռնային հրոսակներից): Այս նպատակաւ էր, որ վրացիք ուուներին յանձնեցին ոչ միայն իրենց տէրութիւնը՝ այլ և իրենց ազգային—կուլտուրական բոլոր հիմնարկութիւնները, իրենց եկեղեցին: Վրացիք յոյս ունէին, որ Ռուսաստանի բարձր հոգաւուրութեան ներքոյ կըկառողանային յառաջ տանել իրենց ազգային կուլտուրական գործի զարդացումը, որին թշնամաբար էին վերաբերում կոյք ֆանատիկունները, Ռուսաստանի այդ խիական թշնամինները: Վրաստանի եկեղեցին կըօնով միացրեց վրացական դանագան ցեղերը Քրիստոնի ծնունդից մինչև VI—VII դարը և փոխանակ աւելի առաջ տանելու այդ քաղաքակրթական գործը, որ հոգեպէս կապում էր Վրաստանն ու Ռուսաստանը իրար հետ, վրացիք տեսան, որ հէնց եկեղեցին դարձաւ նրանց մէջ անմիաբանութիւն սերմանողը և Մինդրելեան ընտրուեց այդ քանի ասպարէզ: Ամենից ցաւալին այնէ, որ երբ ամբողջ մտածող Վրաստանը, որը գեռ վերջնականապէս չի կորցրել իւր հաւատը, տնքում է, հառաջում, որովհետեւ նրա որբազան զգացմունքները կաշշանդուած են, հէնց այդ ժամանակ Վրաստանի եկեղեցու ու եպիսկոպոսը, — ինչպէս այդ երեսում է Դիմիտրի եպիսկոպոսի խօսքերից, — ոչինչ չըգետէ: Սրբազանը պէտք է քաջ գետենայ, որ Վրաստանի եկեղեցիններում ուր միայն հարաւոր էր, հալածում էին վրաց լեզուն և դուրս վանեցին էլ: Հայք, թուրքը, հրէան կարող են մայրենի լեզուով ազօթել իրենց ազօթատներում, իսկ վրացին այդ չի կարող: Զի կարող, որովհետեւ վրացին պրաւօնալաւ է: Վրացու որտում հէնց մանկութիւնից սպանում են կրօնական հաւատը: VIII դարում, երբ Վրաստանը գտնուում էր Բիւզանդիոնի հզօր քաղաքական ազդեցութեան ներքսյ, վրացիք մայրենի լեզուով էին ազօթում և միայն «կերիելէիսան¹⁾» ազօթքը զիտէին: Խոկ այն սիստեմի զործագրութեան միջոցին, որին պաշտպան է կանգնուում Դիմիտրի եպիսկոպոսը, Վրաստանի սրտում, Քութայիսի արական գիմնազիօնում ինն տարուայ մէջ մենք միայն մի քանի անգամ լսեցինք վեաց լեզուով ազօթքը՝ «Ճէր ողորմեան»—թէև մեր քահանան վրացի էր և աշակերտների ^{9/10-}ը վրացի էինք:

Վերջում Դիմիտրի եպիսկոպոսը Դուրնովոյին առաջարկեց հարցնել բոլոր էկզարիններին և «բացարարութիւն խնդրել Վրաստանին եկեղեցինների վերաբերեալ անհասկանալի խնդիրների մասին»: Վրաստանի էկզարիններն ու առաջնորդները կարծեմ

1) «Քրիստո յարեաւ ի մեռելոց»

Նրա համար էին նշանակում, որ գործնականապէս վճռեն եկեղեցուն վերաբերեալ ուշադրութեան արժանի խնդիրները և ոչ թէ նրա համար որ post factum (երբ գործն արդէն կատարուած է) տեսական դիտողութիւն ունենան Վրաց եկեղեցու մասին, որը հէնց այդ առաջնորդների սխալ և կեղծ գործունէութիւնը ներկայ կացութեան հասցեց և ոչ թէ վրացիք ու վրացի հոգեորականութիւնը, որովհետեւ իսկական վրացիներին հեռացնում էին Վրաստանի եկեղեցիներից և Վրաստանի լուսաւորուած զաւակներն այսօր էլ զուր են աղաղակում հետեւ և եալը. —

1) Ինչո՞ւ ցայսօր չկայ Աստուածաշնչի և Աւետարանի վրացերէն հրատարակութիւնը, վրաց եկեղեցական գրականութեան օրինակների ապագրութիւնը, որոնք արդիւնք են եկեղեցականների աշխատանքի: 2) Ինչո՞ւ վրաց, ոչ թէ միայն քահանաների, այլև բարձր հոգեորականութեան մէջ չկայ եկեղեցական պատմութեան և գրականութեան գիտակ անձնաւորութիւն:

3) Ինչո՞ւ հեռացուեց «ոչ թէ քաղաքական», այլ առենք «իրեն կամքով» կիրիօն եպիսկոպոսը, որը գոնէ որոշ չափով ուշադրութեամբ էր վերաբերում եկեղեցական հայրենի դրականութեան:

4) Ինչո՞ւ բաւարարութիւն չը տրուեց վրաց հոգեորականութեան միջնորդութեանը Աստաստանում վրաց եկեղեցական պատմութեան ամբիոն հաստատելու և Պետքըուրդի ճեմարանում հիմնուեց յունական եկեղեցական պատմութեան ամբիոն եկեղեցիների բաժանուելուց ուստած — Վրաց եկեղեցու պատմութեան հետ և այդ ամբիոնը տրուեց մի ուսուցապետի, որը վրացերէն չ'գիտէ, և հետևապէս չի կարող ուսումնասիրել Վրաց եկեղեցու պատմութիւնը, որի գլխաւոր աղթիւրները գրուած են վրացերէն, որոնք թարգմանուած չեն և որոնց մեծ մասը դեռ հրատարակուած չէ: 5) Ի՞նչ է պատճառը, որ հարեւտարի առաջ քաղաքականապէս Վրաց եկեղեցուց աւելի ճնշուած եկեղեցին նոյն Աստաստանում, որովհետեւ ինքն էլ իւր գործերը վարում, համեմատաբար աւելի ծաղկած է և հարազատութեամբ ծառայում է հայ Փողովսդին, հակառակ բոլոր խոչնդունների՝ ամեն միջոց գործ է դնում բաւականութիւն առաջ մուտել հօտի հոգեկան պահանջներին, իսկ Վրաց եկեղեցին.... բայց որտեղ է Վրաց եկեղեցին: Վրաց եկեղեցին չկայ. այլ կան առաջնորդներ և Վրաց եկեղեցու քահանաներ:

— Դառը ճշմարտութիւն, որը հետեւանք է Աւետարանը և եկեղեցին քաղաքական նպատակներին ծառայեցնելու անմիտ և հակաքիստոնէ ական միտումների, մի սկ գործի, որով հոգեկան կեանք և հաւատ ներշնչելու միտսարէն, սպանում են թէ հոգին և թէ մարմինը, իսկ դիակը երբէք հաւատալ չի կարող: